

ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ

Պարմական գիությունների դեկտոր

ԿԱՐԵՆ ՅԵՊԵՆ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՌԵՒՆԳՎԱԾ ՆԱՅ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԱՆՑ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Մեծ եղևոնի ընթացքում առևանգված և դեռ բռնի մահմեդականների արևելքում պահվող հայ կանանց ու երեխաների ճակարագիրը 1920 թ. Ազգերի լիգայում բուռն քննարկումների առարկա էր դարձել: Քանի որ խնդիրը վերաբերում էր միջազգայնորեն դատապարտված և արգելված այնպիսի մի իրողության, ինչպիսին ստրկավաճառությունն էր, լիգան իրեն պարտավորված էր զգում գործուն քայլեր ձեռնարկել այդ դժբախտների փրկության նպատակով¹: Ըստ այդմ, լիգան իր 1920 թ. դեկտեմբերի 15-ի անդրանիկ նիստում վճռեց ստեղծել մի հանձնաժողով, որը, մեկնելով Արևելք, պետք է ըստ հնարավորին մանրամասն արեղևություններ հավաքեր առևանգված կանանց ու երեխաների վերաբերյալ²: Հանձնաժողովը, որի կազմում դր. Քենեդիից և Էմմա Կուշմանից բացի ներգրավվեց նաև դր. Յոհաննես Լեփսիուսի երկարամյա աշխատակից, դանիոնի օրիորդ Կարեն Յեպեն, Ազգերի լիգայի 1921 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ներկայացրեց իր հետազոտության արդյունքները, ըստ որոնց՝ զինադադարին հաջորդող շրջանում 90 000 հայ որբեր մահմեդական գերությունից ազատագրվել և արեղևորվել էին որբանոցներում, իսկ շուրջ 73 000 երեխաներ և հազարավոր կանայք ու աղջիկներ դեռ գտնվում էին գերության մեջ: Ազգերի լիգան համապարասխանաբար իր սեպտեմբերի 23-ի նիստում ընդունեց որոշում փրկարար աշխատանքները սկսելու մասին, որոնց կազմակերպումը և իրականացումը հանձնարարվեց նշված հանձնաժողովի անդամներին: Այդպիսով, նրանք ստանում էին մի նոր՝ այսպես կոչված «կառավարման մարմնի» կարգավիճակ՝ գործելով Ազգերի լիգայի կոմիտարի ենթակայության ներքո³: Ճակարագրի բերումով Յեպեն պետք է դառնար այդ դժվարին առաքելության ոգին և հերոսը:

Անշուշտ, հեշտ չէր ստանձնել նման մեծ պարասխանաբարություն, երբ Ազգերի լիգան, համաձայնելով հովանավորել որբերի և կանանց ազատագրումը, նրանց ճակարագրի հետադա փնտրման հարցում որևէ հանձնառություն չէր կամենում ստանձնել: Այն միտքը, որ դժբախտ մարդիկ մահմեդականների արևելքի դուրս բերվելուց հետո պետք է մարմնավորվեին բախրի բմահաճույքին, Յեպենի մեջ հոգեկան մեծ երկվություն էր ստեղծել: «Նախնական հետազոտության արդյունքն այնպիսին էր, որ այստեղ մի ահռելի առաջադրանք իր լուծմանն էր սպասում, - նշում էր նա հետադարձ հայացքով: - Նույնիսկ եթե բանարկված հայերն ազատագրվեին, ապա նրանց փրկությունը միայն կիսով չափ կարարված կլիներ: Նրանց պետք էր նաև հնարավորություն ընձեռել, որ դարձյալ կարողանային իրենց ժո-

1 Տե՛ս K. Jappe, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 21:

2 Տե՛ս Maßnahmen des Völkerbunds zur Rettung der von Türken verschleppten armenischen Frauen und Kinder, „Der Orient“, 1922, էջ 9:

3 Անդ:

դավրդի մեջ Կրեդ գրադեցնել: Այո, ամենաճիշդը կլիներ այն, որ այդ Կրեդը նրանց համար նախապես ստեղծվեր: Չէ՞ որ նրանք ամբողջությամբ խլված էին յուրայիններից, մեծ մասն այլևս որևէ մերձավոր չէր գտնվի և կմարմնավեր միայնության»⁴:

Երբ, սակայն, Յեպեն ի դեմս հայերի դանիացի բարեկամների և դր. Լեփսիուսի գրավ օգնականներ, որոնք պարտասար էին գործվից լինել և նրա հետ ստանձնել պարասխանարվությունը, նրա մեջ ամրապնդվեց այն հույսը, որ համարել ուժերով հնարավոր կլիներ դժբախտ մարդկանց հետագա գոյությունն համար միջոցներ հայթայթել⁵: Ուստի նա կարող էր կայացնել իր վճռը և ձեռնամուխ լինել փրկարար աշխատանքների կազմակերպմանը:

Լեփսիուսի հետ համագործակցության հետևանքները պարզաբանվեցին 1921 թ. սկզբին (Ջադիկից մեկ շաբաթ առաջ), երբ Յեպեն հիշյալ հանձնաժողովի կազմում Արևելք մեկնելիս Պոստդամում այցելեց նրան և իրազեկեց Ազգերի լիգայի մրադրության մասին⁶: Նախանշական է, որ, չնայած նախապես ծրագրվել էր աշխատանքները սկսել Կ. Պոլսի մերձակա՝ Անարարի կողմից գրավված տարածքներում, սակայն Լեփսիուսի հետ հանդիպումից հետո Յեպեն վճռեց հնարավորության դեպքում հաստատվել Ռոմայում, իսկ եթե Թուրքիայի ներքին անկայունությունը դա չթույլարեր, ապա՝ Նախկում⁷: Ընտրությունն, անշուշտ, պարահական չէր: Ռոման Լեփսիուսի և Յեպեի վաղեմի աշխատակալն էր, և քաղաքի փորձառությունն ու ճանաչողությունն այնտեղ կարող էին խիստ օգտակար լինել: Իսկ Նախկում նախընտրելի էր որպես ճանապարհների խաչմերուկ և հյուսիսային Միջագետքի բնական կենտրոն, որտեղ առևանգված կանանց և երեխաների թիվն, ըստ հավասարի Կոնստանտնուպոլսի, պետք է խիստ մեծ լիներ, և որը միաժամանակ Ռոմայից հեռու չէր: Այդ ենթադրությունները հաստատվեցին նաև Յեպեի ճանապարհորդության ընթացքում կատարված նախնական հետազոտության արդյունքներով, ըստ որոնց՝ միայն Սիրիայում և Միջագետքի հյուսիսային շրջաններում կային շուրջ 30 000 առևանգված կանայք ու երեխաներ⁸:

Թուրքիայում շարունակվող պարերազմական իրադրության և ներքաղաքական անկայունության պայմաններում Ռոման, բնականաբար, չէր կարող հեռակա դառնալ փրկարար աշխատանքների համար, և Յեպեն որոշեց հաստատվել Նախկում: Մահմեդականների մոտ գտնվող հայ կանանց և երեխաների ազատագրումը չափազանց բարդ խնդիր էր, քանի որ Ազգերի լիգան այդ նպատակով մահմեդական իշխանությունների վրա որոշակի դիվանագիտական կամ ռազմական ճնշում գործադրելու մրադրություն չուներ, և Յեպեն ստիպված էր գործել միայնակ՝ ապավինելով սոսկ սեփական ուժերին և հնարամտությանը⁹: Նա հարկադրված էր նաև ըստ հնարավորին խուսափել մահմեդականների հետ առճակատումներից, ինչը գրեթե անհնար էր թվում, եթե հաշվի առնենք, որ Մեծ եղևո-

4 K. Jeppe, նշվ. աշխ., էջ 21:

5 Տե՛ս M. I. Sick, Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1929, էջ 193: Նայ ժողովրդի դանիացի բարեկամների կոմիտեն, որին անդամակցում էր Յեպեն, նրան խորհուրդ էր տալիս առաջարկն ընդունել՝ երաշխավորելով իր աջակցությունը: Անդ:

6 Տե՛ս J. Lepsius, Mitteilung, „Der Orient“, 1921, էջ 62-63:

7 Անդ:

8 Տե՛ս K. Jeppe, նշվ. աշխ., էջ 21:

9 Տե՛ս K. Jeppe, էջ 21:

նից արդեն անցել էր յոթ տարի, և այդ ընթացքում ճանաչելով «հայկական ռասան», հայ կանանց և երեխաների «բնածին օժտվածությունը»՝ մահմեդականները չէին համակերպվի նրանցից հրաժարվելու մտքի հետ: «Որպես կանոն՝ մահմեդական ամուսինը հիացած է իր հայ կանանցով, - նշում էր այդ առթիվ Ա. Յեպեն, - բանի որ նրանք ավելի բարձր մարդկային արեսակ են իրենցից ներկայացնում, քան մահմեդական կանայք»¹⁰:

Նրան, սակայն, բավականաչափ հայտնի էր հայ կանանց «խորշանքը պարտադրված ամուսնու հանդեպ», ուստի նա հույս ուներ, որ եթե կանանց արիություն ներշնչվեր ու նաև ճանապարհին որոշ օգնություն ցուցաբերվեր, ապա նրանք առանց փախուսելու կդիմեին փախուստի¹¹: Յեպենի համոզմամբ նույնը վերաբերում էր այն երեխաներին, ովքեր աքսորի ժամանակ եղել էին 5-12 տարեկան, և դեռ չէին մոռացել իրենց ազգային պարկանելությունն ու եղերական անցյալը: Այլ էր խնդիրը, սակայն, մանկահաս երեխաների պարագայում, ովքեր իրենց մայրերից իսկվել էին օրորոցային տարիքում և, ապրելով մահմեդականների մեջ, իրենց ազգային պարկանելության մասին գաղափար իսկ չունեին: Այդպիսիներին փրկելու հնարավորություն գրեթե չկար, բանի որ խիստ դժվար էր պարզել նրանց ինքնությունը, և բացի այդ նրանք կարող էին մահմեդական միջավայրից իսկվել միայն ուժային միջոցներով, որոնք Յեպեն իր տրամադրության տակ չունեւ¹²:

Ինչևէ, չնայած վերոնշյալ բարդություններին, նա լիահույս էր, որ կկարողանար իր առաջադրանքն իրականացնել, և, որ ամենաուշագրավն է, նրա լավարկությունը պայմանավորված էր գլխավորապես հայ ժողովրդի ազգային և բարոյափոփոխական նկարագրի քաջարեղակությամբ: «Ում զարմանք չի պարճառել հայերի ինքնապահպանման անհաղթելի բնագոյը, որը նրանց ոչ միայն որպես անհապրների, այլև շար ավելի որպես ժողովրդի է հզորացնում, - նշում էր նա իր տեղեկագրերից մեկում: - Կարելի էր կանխարեսել, որ այն հսկայական ուժը, որը հայ ժողովուրդն իրեն հարկացված պոստում որպես մեր ռասայի, մեր մշակույթի, մեր կրոնի պիտներ Ասիային դեմ հանդիման պահպանել է, և որը վերջին տարիների անուր իրադարձությունների ընթացքում եւս իր ազդեցիկությունն է հայտնի էրել, այժմ նրանց միայնության մեջ նույնպես կպաշտպանեն մահմեդականներին բաժին դառնալուց»¹³:

1922 թ. զարնանից հաստատվելով Նալեպում՝ Յեպեն այնպեղ հիմնեց մի այսպես կոչված «փախստականների կացարան», որտեղ նրանք կարող էին առժամանակ ապրել, մինչև հոգ կտարվեր նրանց հետագա ճակատագրի մասին: Այն սկզբում բաղկացած էր Նալեպի կենտրոնում, հայկական ճամբարի մոտ կանգնեցված մի մեծ վրանից: Ներառյալում

10 K. Jeppe, Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, p. 59:

11 Տե՛ս K. Jeppe, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, էջ 21:

12 Չնայած դրան, երբեմն տեղի էր ունենում նաև անհավասարակշռություններ: Ինչպես վկայում էր Յեպեն, տարիներ շարունակ մահմեդական վրանում ապրած տղաները կամ աղջիկները, որոնք համոզված էին եղել, որ փվյալ ընտանիքի երեխաներն են, մի օր արթնանում էին երազից, իրենց զգում որպես հայեր, և այդ պահից ձգտում դեպի իրենց ժողովուրդը: Տե՛ս անդ, էջ 22: Օրինակ մի փոքրիկ աղջիկ հայկական ժամերգությունից այնպես էր ազդվել, որ սեփական նախաձեռնությամբ վերադարձավ հայկական համայնքի գիրկը: Մեկ ուրիշ տղայի վրա նույնօրինակ ազդեցություն էր գործել Նալեպի հայկական եկեղեցու բակի տեսարանը: Նման դեպքերը, սակայն, մեծ թիվ չէին կազմում: Տե՛ս K. Jeppe, Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, էջ 61:

13 K. Jeppe, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, p. 22:

փախստականների թվի մեծացմանը գուցա հետ հարկ եղավ ընդլայնել նաև նրանց ընդունման համակարգը, և 1922 թ. վերջին վարձակալվեց մի քանի, որը շրջապատվեց վրաններով: Քանի որ վրանները տեղական ապաստան չէին կարող դառնալ, և բացի այդ կարճ ժամանակից դարձյալ տարածքի ընդլայնման անհրաժեշտություն առաջացավ, Յեպեն 1923 թ. քաղաքից դուրս, գովաստան այգիներում վարձակալեց մի ընդարձակ հողամաս, որի վրա հիմնվեց նոր կացարանը¹⁴: Այն բաղկացած էր մի մեծ փոխադրելի բարաքից, որն ուղարկել էր Լոնդոնի հայկական կարմիր խաչը¹⁵, և չորս համեմատաբար փոքր տներից, որոնք կառուցվեցին Յեպեի միջոցներով: Բացի այդ, փրկագնվող կանանց և օր. Յեպեի բնակության նպատակով հողամասի մոտակայքում վարձակալվեց մեկ ուրիշ տուն, որտեղ տեղավորվեցին նաև խոհանոցը, մատանները, լոգարանը և ճաշասենյակը: Այդ ամբողջ համալիրը, որի ձևերը նման համար ընդհանուր հաշվով ծախսվեց 26 800 մարկ, կարող էր տեղ ապահովել շուրջ 200 փախստականների համար¹⁶ և որպես ժամանակավոր կացարան լիովին բավական էր հարաճուն պահանջները բավարարելու համար:

Նավաբագրելով մի շարք վստահելի գործակալների՝ Յեպեն 1922 թ. ձեռնամուխ եղավ փրկարար աշխատանքների կազմակերպման, որոնք ծավալվեցին Դեր Էս Զոր-Նասսիջե-Մարդին ուղղությամբ¹⁷: Աշխատանքի արդյունավետության ապահովման և միաժամանակ «բանտարկյալների» փախուստը դուրացնելու նպատակով նա այդ քաղաքներում հիմնեց գաղտնի գործակալություններ և հավաքակալաններ, որտեղ նրանք կարող էին ընդունվել, կազմավորվել և, սրանալով սննդամթերք ու դրամ, շարունակել իրենց ճանապարհը: Բացի այդ մի գործակալություն ստեղծվեց նաև Ջարաբլուսում, որը կարևոր վայր էր Եփրատի գետանցի առումով: Այդ գործակալության խնդիրն էր Թուրքիայից եկող հայերին օգնել անցնելու Սիրիայի տարածքը: Թուրքական քաղաքների հետ կապը հիմնականում պահպանվում էր չորեպանների կամ որպես այդպիսին հանդես եկող գործակալների միջոցով¹⁸, որոնք իրենց հերթին հայ «բանտարկյալների» և մասնավորապես հարեմներում գտնվող հայտնիների հետ հաղորդակցվելու համար օգտվում էին այնպիսի անարգել մուսլիմ իրավունք ունեցող անձանց՝ օրինակ, կույր երաժիշտների կամ լվացարարուհիների ծառայությունից¹⁹ և ապա, ձեռք բերելով համապատասխան պայմանավորվածություն, նրանց օգնում էին փախչել Նալեպ²⁰: Իսկ ինչ վերաբերում էր հավաքակալանների կամ այլ կերպ

14 Կ. Յեպեն նոր տարածքն ընդլայնելու հաշվի առավ այն հանգամանքը, որ փախստականների մեծ մասը գալու էր գյուղական վայրերից և հեշտությամբ չէր հարմարվի քաղաքային կյանքին: Տե՛ս **K. Jappe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 19:

15 Բարաքը պարունակում էր մի մեծ դասասենյակ, մեկ սենյակ ուսուցիչների, և երկու ննջարան տղաների համար, իսկ ձեղնահարկը ծառայում էր որպես աղջիկների ննջարան: Տե՛ս **K. Jappe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 18:

16 Անդ:

17 Անդ, էջ 39:

18 Անդ:

19 **G. Hetzel**, An die Pflegeeltern unserer Waisen- und „Lösegeld“kinder, „Der Orient“, 1926, էջ 15:

20 «Նրանք նրանց տեղեկացնում են փախուստի հնարավորության մասին և ժամադրում մի վայրում, որտեղ նրանք նշանակված ժամին պետք է լինեն, - նշում էր ժամանակակիցներից մեկը՝ Գերարդու Նեթցելը: - Գնալով այնպիսի փախստականները ստանում են դրամ և ուրեմը և այնուհետև մեքենայով կամ երկաթուղով վրանգավոր գործուց դուրս են բերվում և հասցվում Նալեպի փախստականների ճամբարը: ... Կանանց և աղջիկների սեփական նախաձեռնությամբ փախչելը նպատակային չէր լինի: Նրանք նորից կբռնվեին և իրենց փախուստի համար ծանր պատիժներ կկրեին»: Անդ:

ասած՝ մասնաճյուղերի գործունեության վերահսկողությանն ու փոխադարձ կապի ապահովմանը, ապա Յեպեն դա հանձնարարեց իր որդեգիր Միսաք Մելքոնյանին, որը սկզբից եւեթ դարձավ նրա «աջ ձեռքը»²¹: Նավաբակայանների հետ կապը պահպանելու, հեղափոխությունների և թույլ ու անառողջ հայտնիներին Նալեպ Կոնյալիսի կողմից Կ. Յեպենի հարկացված ավտոմեքենան, որը հայրնի էր «Փրկարար մեքենա» կամ «Աննա-մեքենա» անվամբ²²:

Ինչեւէ, Յեպեի «բարոգշությունը անսրբանելի և աննկար կերպով դրսևում, փափասությանն հանում շրջում էր», և միայն 1922 թ. ամռան և աշնան ամիսներին 225 կանայք, Կոնյալիսի ու աղջիկներ, հեղափոխված օգնության կանչին, փախուստի դիմեցին և բարեհաջող հասան Նալեպ²³: Նրանց ազատագրման համար ծախսվեց շուրջ 2300 ֆունտ սթրլինգ (կամ 46000 մարկ), որից 600-ը կազմում էին նրանց ճանապարհածախսը, գործակալների և հավաքակալանների աշխատանքների համար կատարված հարկացումները, իսկ 1700 ֆունտը՝ ճանապարհին նրանց հարկացված սնունդի, հագուստի, բուժօգնության և հարակից մյուս ծախսերը²⁴: Յուրաքանչյուր անձի փրկության համար, այսպիսով, միջին հաշվով ծախսվում էր 6-7 ֆունտ սթրլինգ կամ համապատասխանաբար 120-140 մարկ²⁵:

Դեռ 1922 թ. առաջին ամիսներին պարզ դարձավ, որ Ազգերի լիգայի դրամական հարկացումները չէին կարող բավարարել փրկարար աշխատանքների ծավալն ըստ հարկի ընդլայնելու համար: Ուստի Յեպեն ձգարում էր գործել հնարավորին չափ խնայողությամբ՝ դրա միակ ճանապարհը համարելով փախստականներին ինքնուրույն կյանքի նախապատրաստելու գործընթացի արագացումը²⁶: Բարեբախտաբար շատ դեպքերում հայրնիսն էին ազգականներ, որոնք, երեխաներին վերցնելով իրենց մոտ, սրանձնում էին նաև նրանց ապագայի պատրաստանքները: Այդ հարցում մեծ էր նաև Կ. Յեպեի երախտիքը, որն աջակցում էր փախստականների ազգականների որոնմանը և այդպիսիներին հայրնաբերելու դեպքում ապահովում կապը նրանց միջև²⁷: Եթե, սակայն, ոչ ոք չէր գտնվում, ապա պատրաստանքները ծանրանում էր Յեպեի վրա: Միայնակ փոքրիկ երեխաներին նա փրկավորում էր որբանոցում՝ սրանձնելով նրանց խնամքը²⁸, իսկ մեծահասակներն անցնում էին ուսման և դաստիարակության մի հիմնային փուլ, որից հետո կարող էին սեփական աշխատանքով գոյարկել: Այդ հարցում առանձնապես մեծ էր դանիացի բարեկամների ներդրումը, որոնք փրամադրել էին ուսուցչի աշխատավարձը, հոգ էին փարել դասագրքերի և այլ դպրոցական պիտույքների համար, փողաներին արհեստագործության մեջ վարժեցնելու նպատակով սթրլինգ էին հյուսնարան և կաշեգործարան, իսկ աղջիկների համար՝ ասեղագործության արհեստանոց²⁹: Այդ միջոցառումների նշանակությունն ավելի պարզ

21 Տե՛ս **K. Jeppe**, Ein Jahr Rettungsarbeit, անդ, էջ 67:

22 Տե՛ս **K. Jeppe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 19-20:

23 Տե՛ս **K. Jeppe**, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, էջ 22:

24 Տե՛ս **K. Jeppe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, էջ 34:

25 Տե՛ս **K. Jeppe**, Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 62:

26 Տե՛ս **K. Jeppe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, էջ 34:

27 Անդ, էջ 19: Նման. անդ, էջ 34:

28 Որբանոցը հիմնվել էր պահպանվում էր դանիացի բարեկամների միջոցներով: Տե՛ս անդ, էջ 35:

29 Անդ, էջ 35:

դարձնելու համար արժե նշել, որ 1923 թ. սկզբին հիշյալ 225 անձանց շուրջ կեսը Յեպեից այլևս նյութական կախվածություն չունեին³⁰, իսկ 1924 թ. միայն ասեղնագործական ձեռնարկությունում սևիական աշխատանքով իրենց վաստակն ապահովում էին ավելի քան 100 այրիներ և երիտասարդ աղջիկներ³¹: Ձեռագործների մեծ մասը 1924 թվից Յեպեի կողմից պարբերաբար առաքվում էր Դր. Լեվոնյանի արևելյան առաքելության (այսուհետև՝ նաև Դր. Լեվոնյանի ԱԱ) գրասենյակ, որն իրականացնում էր դրանց վաճառահանումը Գերմանիայում³²:

«Փրկարար» կացարանից ինքնուրույն կյանք մտնող՝ բոլորովին միայնակ կանանց և աղջիկների անվտանգությունն ապահովելու նպատակով Յեպեն և Նալեպի հայ համայնքը միացյալ նախաձեռնությամբ հիմնեցին նաև մի վերստուգիչ գրասենյակ, որի ծախսերի մեծ մասը հատկացվում էր Յեպեի կողմից, և որը, համարվելով Ազգերի լիգայի ենթակառուցյուն, կարողանում էր իր հովանավորյալներին մշտապես պահել իր տեսադաշտում³³: Խառը բնակչություն ունեցող այնպիսի քաղաքում, ինչպիսին Նալեպն էր, այդ ձեռնարկումն անշուշտ խիստ կարևոր էր, և գրասենյակի հեղինակությունը կարճ ժամանակում քարածվեց ամբողջ քաղաքում՝ նպաստելով նաև կանանց նախաձեռնողականության ընդլայնմանը, այն աստիճան, որ նրանք չէին խուսափում նույնիսկ այլապես մերժելի համարվող՝ սպասուհիների աշխատանքից³⁴:

Ինքնուրույն կյանք մտնող փախստականների անվտանգության ապահովման և միաժամանակ բարոյալքման վրանց գերծ պահելու առումով ոչ պակաս կարևոր էր ևս այն, որ կացարանն իր դռները նրանց առջև երբեք չէր փակում, և որ նրանք միշտ ունեին «հարազատ քան» գիտակցությունը, որտեղ անհաջողության կամ կարիքի դեպքում դարձյալ կարող էին պարսպարվել: «Իհարկե, դա լրացուցիչ ծախսերի տեղիք է տալիս, - նշում էր Յեպեն իր տեղեկագրերից մեկում, - սակայն փոխարենը մեր երեխաներն ունեն անվտանգության զգացումը, որը գերազնահարել հնարավոր չէ: Նրանք կվախենային կացարանը լքել և ինչ-որ բան ձեռնարկել, եթե չիմանային, որ վերադարձի ճանապարհը միշտ բաց է: Եւ արդարև, դա հազվագյուտ է չարաշահվում: Մենք շատ զարմացած ենք, թե նրանք որքան ազնվորեն և փորձում կանգնել սևիական ուրբերի վրա»³⁵:

Ինչևէ, 1924 թ. մահմեդական գերությունից ազատագրվեց և Նալեպ տեղափոխվեց ևս 250 մարդ³⁶, որոնցից 58-ը քաանչորս քաղեկանից փոքր երեխաներ էին, 112-ը՝ 14-18 տարե-

30 Տե՛ս **K. Jeppe**, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, էջ 23:

31 Տե՛ս **K. Jeppe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, 1925, էջ 20:

32 Տե՛ս Armenische Handarbeiten aus dem Orient, „Orient im Bild“, 1927, էջ 8: Նմմր. Armenische, reinsilberne Filigran-Schmucksachen (Handarbeit), „Orient im Bild“, 1929, էջ 24 և այլն:

33 Տե՛ս **K. Jeppe**, Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, էջ 34:

34 Անդ:

35 Անդ: Ամփոփելով իր տարիների ձեռքբերումները՝ Յեպեն հետագայում կարող էր արձանագրել. «Մենք երբեք նրանցից որևէ մեկին չթողեցինք կարիքի մեջ: Նրանք կարողանում էին միշտ դիմել մեզ, երբ ինչ-որ բան ծուռ էր գնում...»: Անդ:

36 Տե՛ս **K. Jeppe**, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, էջ 34: 1923 թ. փրկարար աշխատանքների վերաբերյալ ստույգ տվյալներ չեն պահպանվել, բայց նախորդ տարվա և հաջորդ երկու տարիների տվյալների համեմատական քննությունը վկայում է, որ 1923 թ. ազատագրվածների թիվը հասնում էր մոտ 200-ի: Տե՛ս ևս: Նմմր. **K. Jeppe**, Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 67 և 70:

կան քղաներ, իսկ 80-ը երիտասարդ կանայք եւ աղջիկներ³⁷: Թե որքան հետեւողականորեն էր Յեպեն գրավում իր պաշտպանյալների հետագա ճակարագրով, կարող են ցույց տալ հետեւյալ վիճակագրական տվյալները. 1925 թ. ապրիլ ամսվա տվյալներով նրանցից 130-ը գտնվել էին իրենց հարազատներին եւ տեղափոխվել նրանց մոտ, 10 երեխաներ ընդունվել էին դանիական որբանոցը, 40-ը, արհեստագործության մեջ հմտանալով, ինքնուրույն վաստակում էին իրենց ապրուստը, իսկ 70-ը դեռ գտնվում էին փախստականների կացարանում՝ Յեպենի խնամքի եւ հսկողության ներքո³⁸:

Վերադարձողները մեծ մասամբ գտնվում էին ծանր առողջական վիճակում, ուստի մեծ ծախսեր էին կատարվում նաեւ նրանց ապաքինման ու կազդուրման համար: «Սարսափելի է տեսնել այն անխնամությունը, որին զոհ է դարձել այդ խեղճ ժողովուրդը,- քրեականացում էր Կ. Յեպեն: - Նրանց աչքերը հաճախ շար ծանր վիճակում են: Նրանց գլուխները ծածկված են վերքերով: Նրանք մալարիա եւ էլի շար ուրիշ հիվանդություններ են տարել: Դա մեր աշխարհի համար սովորական է, եւ մենք մեծ առաջադրանքներ ունենք՝ կապված նրանց բուժման, հարուկ սննդի եւ երկարատև խնամքի հետ»³⁹:

Միայն 1924-ին, օրինակ, նրանց բուժման եւ դեղորայքի ձեռք բերման համար ծախսվեց ավելի քան երկու հարյուր ֆունտ սպունդնգ, որով հնարավոր եղավ առողջացնել եւ կազդուրել նույնիսկ անհուսալի թվացող ծանր հիվանդներին⁴⁰:

Յեպենի եւ նրա գործակալների քարոզչությունն արդեն 1924 թ. այն աստիճան լայն տարածում էր ստացել, որ փախուստի փորձեր էին կատարվում նույնիսկ Դիարբեքից եւ Թուրքիայի այլ հեռավոր քաղաքներից⁴¹: Իհարկե, այս դեպքում խոսքը վերաբերում էր միայն երիտասարդ քղաներին, որոնք ի վիճակի էին դիմագրավել հեռավոր ճանապարհ-

37 K. Jeppé, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, էջ 35: Ուշագրավ է, որ վերոնշյալ 58 երեխաներից 48-ը 12-14 տարեկան էին, եւ միայն 10-ն էին 12 տարեկանից ավելի փոքր: Տե՛ս նաև, էջ 37: Նման երեխաներին հայրենաբերելը չափազանց դժվար էր, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վաղ մանկական տարիքից մեծանալով մահմեդական ընտանիքներում նրանք ծուլվել էին մահմեդական միջավայրին եւ իրենց ազգային պարկանդության մասին պարկերացում չունեին: «Միայն մեծագույն պարահասկանության միջոցով են նման երեխաները վերագտնվում, նշում էր այդ առթիվ Յեպեն: - Հիմնականում նրանց պետք է համարել կորած...»: Տե՛ս նաև, էջ 38:

38 Անդ, էջ 35:

39 Անդ, էջ 38: «Մենք կարող ենք խնամել խեղճ արարածներին, եւ ինչ մեծ ուրախություն է, երբ նրանք կազդուրվում են,- գրված էր մեկ այլ քրեականագրում: - Այդ թշվառները կարիք ունեն թշկական սպասարկման եւ խնամքի: Եւ առհասարակ ինչպիսի՜ վիճակում է եկողների մեծ մասը: Մի երիտասարդի՝ Եղիայի մասին մենք լսում ենք. «Նա իր կյանքում դեռ ոչ մի անգամ չի լողացել: Դուք պետք է նրան տեսնեիք, երբ նա այստեղ գալուց հետո բաղնիք մտնում: Նրա փոքրիկ դեմքը ճառագում էր, եւ նա ասաց. «Ի՛նչ հրաշալի է այստեղ, ինչպես երագում: Մի կլին ինձ լվանում է, իսկ մեկ ուրիշը ջուր է լցնում ինձ վրա»: Տե՛ս G. Hetzel, An die Pflegeeltern unserer Waisen- und „Lösegeld“-kinder, „Der Orient“, 1926, էջ 15: «Նա մի թշվառ արարած է՝ այստեղից կրծքով, քանի որ արաբների կանայք նրան (նա արաբների մոտ հովիվ էր) հին, այրող ցնցոտիներ են հագցրել,-պարմում էր մեկ ուրիշ քրեականագիր:- Այո, ինչպես են տեղ հասնում փրկվածները. ամբողջովին կեղտոտ եւ մակաբույծ միջատների մեջ, ցնցոտիներով եւ սովահար: Սպրկության մեջ ավելի հարվածներ են եղել, քան հաց»: Անդ:

40 Տե՛ս K. Jeppé, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, էջ 38: Նաստարության բժշկին մեծ աջակցություն էր ցուցաբերում մի հայ բժիշկ՝ Սիրիայում «Բժիշկների մեծ լույս» մականունը ստացած դր. Այթունյանը: Նա իր՝ նույնպես բժիշկ, Անգլիայում ուսանած որդու հետ միասին Նալեպում հիմնել էր նորագույն սարքավորումներով հագեցած մի ժամանակակից հիվանդանոց, որը Սիրիայում իր նմանակը չունեւ, եւ որն, ի դեպ, հանձն էր առել ազգաբարձրված հայերի արյան հետազոտությունը կատարել անվճար: Հիվանդանոցում իրականացվում էին բազմաբնույթ հետազոտություններ եւ բարդ վիրահատություններ, որոնց շնորհիվ կյանք վերադարձան Յեպենի՝ նույնիսկ ամենածանր հիվանդները: Անդ:

41 Անդ, էջ 36:

ների գրկանքներին և հաղթահարել վրանգները: Նման օրինակները, սակայն, միաժամանակ վկայում էին, թե նշված և մյուս հետավոր շրջաններում որքան մեծ պեղք է լինել նաև այն դժբախտների թվաքանակը, ովքեր ազատության էին ձգվում, բայց առանց օգնության չէին կարող փախուսարի դիմել: Յեպեն նրանց կարող էր ձեռք մեկնել միայն իր մասնաճյուղերի թվի մեծացման դեպքում, ինչը Ազգերի լիգայից հարկացվող՝ խիստ սահմանափակ միջոցներով հնարավոր չէր իրագործել և մշտապես մնում էր նրա հիմնական մարահոգության առարկան⁴²: «Մի՞թե քաղաքակիրթ աշխարհի համար խայրատակություն չէ, որ այդ կանայք և երեխաները չկարողանան փրկվել միայն դրամի բացակայության պարճառով, նշում էր նա իր նամակներից մեկում: Մենք այդ անլուր հանցագործության համար քիչ թե շատ համապատասխանաբար ենք կամ առնվազն կդատնաք, եթե այդ խնդիրը չունենք, և Ազգերի լիգայի ջանքերը (որը նույնպես դրա համար միջոցներ չունի և հույսը դրել է քրիստոնեական բարեգործության վրա) վիժեցվեն»⁴³:

Նաղկանշական է, որ Յեպենի այդ մեծ նվիրումը պայմանավորված էր ոչ միայն մարդասիրական նկատառումներով, այլև այն մեծ մշակույթի փրկության մղումով, որի կրողն էր հայ ժողովուրդը: Եւ պարահական չէ, որ նա իր փողեկագրերում շարունակ փորձում էր դա ըմբռնելի դարձնել նաև քաղաքակիրթ աշխարհին: «Մեր մեջ դեռ կան ընդարձակ շերտեր, որոնք պարբերաբար են մեր հոգևոր արժեքների պահպանման համար մեծ գոհողություններ կարարել: Բսկ այդ դեպքում պեղք է նաև մեր մեջ ինքնապահպանման բնագոյն արթնալու: Չէ՞ որ մեր ռասայի, մեր եկեղեցու, մեր մշակույթի մի հարվածն է, որ այսօրվա Ասիայի կողմից պարզապես ոչնչացվում է: Առաջադրանքի բնույթը կհասնի՞ արդյոք Եւրոպայի գիտակցությանը, այդ դեպքում նա այն կհամարի իրենը»⁴⁴:

1925 թ. Յեպենին մասնակիորեն հաջողվեց իր մարդկայությունն իրականացնել, և բեղվինաբնակ բնակավայրերի կենտրոնում՝ Ռաս-Ուլ-Այնում հիմնվեց թվով 6-րդ հավաքակալանը⁴⁵: Ընկրությունը պարահական չէր, քանի որ 1916 թ. այդ քաղաքում և շրջակայքում սպանողի էին ենթարկվել արքայազն 24000 հայեր, իսկ հազարավոր հայ երեխաներ վաճառվել էին արաբներին ու թուրքերին⁴⁶: Եթե նույնիսկ վերջիններիս մեծ մասը հեղաշարժում փրկվել էր երկրի այլ հարվածների, ապա Յեպենի հաշվարկներով քաղաքի շրջակայքում դեռ պեղք է մնացած լինելին մոտ երկու հազար երեխաներ⁴⁷, որոնց փրկությունը պեղք է դառնար նորաբաց մասնաճյուղի հիմնական առաջադրանքը: Բացի այդ, Ռաս-Ուլ-Այնը գտնվում էր Փրանսիական ջոկատների վերահսկողության ներքո և երկաթուղային կապ ուներ Նախեյի հետ, ինչն, իհարկե, կարևոր նախադրյալ էր արդյունավետ գործունեություն ծավալելու համար: Յեպեն իր կանխարևածումներում չէր սխալվել, և նոր մասնաճյուղը մեծ դեր ունեցավ հեղաշարժ փրկարար աշխատանքներում:

1925 թ. ազարագրվեցին և Նախեյ փողափոխվեցին ևս 300 հոգի, որոնց 30 փոխ-

42 «Եթե մեր բյուջեն մեզ թույլ տար շատ մասնաճյուղեր հիմնել, նշում էր նա իր 1924 թ. հաշվարկության մեջ, և դրանք ըստ հարկի դրամով ապահովվել, ապա մենք կարող էինք շարունակել ազարել»: Անդ:

43 K. Jepppe, Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, p. 63:

44 K. Jepppe, Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, p. 22:

45 Տե՛ս K. Jepppe, Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 67:

46 Տե՛ս «Karen Jeppes Arbeit», էջ 5:

47 Անդ:

սը կանայք եւ աղջիկներ էին, 30 Կոկոսը՝ 15 Կարեկանից փոքր երեխաներ, իսկ մյուսները՝ նշված Կարիքը գերազանցող Կոկոսներ⁴⁸։ Նրանց փրկությունն իրականացնելու համար ծախսվեց 2700 ֆունտ սթրլինգ կամ յուրաքանչյուրի համար միջին հաշվով 9 ֆունտ սթրլինգ⁴⁹։ Նարկանշական է, որ մինչև Կարեկները նրանցից 200-ը Յեպեի աջակցությամբ կարողացան գտնել իրենց ազգականներին եւ Կոկոսներին նրանց մոտ, 30-ը դարձան միանգամայն ինքնուրույն, եւ 1926 թ. սկզբին կացարանում բնակվում էին միայն 80 փախստականներ⁵⁰։

Այսպիսով, փրկարար աշխատանքների առաջին չորս Կարիքների ընթացքում մահմեդական լծից ազատագրվեցին եւ իրենց ժողովրդի գիրկը վերադարձան ընդհանուր թվով 1100 հայեր, որոնցից 950-ի փրկությունն իրականացվել էր Յեպեին հատկացված նյութական միջոցներով, իսկ 150 հոգու ծախսերը հոգացել էին նրանց հարազատները⁵¹։ Այդ ամենը հնարավոր դարձավ Յեպեի մեծ նվիրումի, նրա հովանավորների նյութական աջակցության (Ազգերի լիգայից հետո, ինչպես շուրջ կրթականը, այդ հարցում մեծագույն ներդրումն ունեցավ Յոհ. Լեփախտսի ընկերությունը) եւ իհարկե նաեւ նրա հայ գործակալների անձնվեր աշխատանքի շնորհիվ, որը, ցավոք, գերծ չէր նաեւ կորուստներից. 1925 թ. նոյեմբերին վախճանվեց Յեպեի ամենաերախտաշատ գործակալներից մեկը՝ Գրիգոր աղան, որը գործում էր Դեր Էս Ջորի շրջանում⁵²։ Տարեվերջին վրեժխնդրությամբ համակված արաբների կողմից սպանվեց նաեւ «Նասիհեի հերոս»-ը՝ Վասիլ Սաբաղը⁵³։ Նրանց փախարիներին նորեքը⁵⁴։

Փոփոխություններ կատարվեցին նաեւ մասնաճյուղերում. 1925 թ. թուրք-քրդական պատերազմի հետևանքով թուրքական սահմանն արգելափակվեց, եւ Ջարաբլուսի մասնաճյուղի գործունեությունը, որի նպատակն էր օգնության ձեռք մեկնել Թուրքիայից եկող փախստականներին, Կարեկներին փաստորեն հասավ իր ավարտին⁵⁵։ Լուծարվեց նաեւ Դեր Էս Ջորի մասնաճյուղը, քանի որ աշխատանքն այդ շրջանում համարվում էր ավարտված, եւ ինչպես Յեպեն էր իր Կոկոսներում նշում, այն արդեն «մաքուր» էր։ Չնայած դրան, Գրիգոր աղայի այրին շարունակում էր մնալ այդ շրջանում իր ամուսնու փոխանորդն ու Յեպեի նոր գործակալը՝ այլ վայրերից Տեր Ջոր եկող հայերին օգնելով շարունակել ճանապարհը դեպի Նալեկ⁵⁶։ Նշված մասնաճյուղերի լուծարումը Յեպեին հնարավորություն տվեց մե-

48 Տե՛ս **K. Jeppe**, Ein Jahr Rettungsarbeit, էջ 69:

49 Անդ, էջ 67: 9 ֆունտ սթրլինգը համարժեք էր 180 գերմանական մարկին: Անդ:

50 Անդ, էջ 69:

51 Անդ, էջ 70: Չնայած այդ 150 հոգու ազատագրումը կատարվել էր Յեպեի գործակալությունների միջոցով, սակայն դրա համար անհրաժեշտ դրամը Կոկոսները էին նրանց հարազատները՝ միաժամանակ սրանձնելով նրանց հերազա ապրուստի եւ օթեանի ծախսերը: Այդ է պարզապես, որ Յեպեն նրանց անուններն իր ցուցակներում չի ընդգրկել եւ Կոկոսներին չի հաղորդել նաեւ իր հաշվետվություններում: Նայելի է միայն, որ չորս Կարիքների ընթացքում այդ եղանակով ազատագրվել է 150 հոգի, այսինքն, Կարեկան միջին հաշվով 38 մարդ: Այդ Կոկոսները ներառված չեն նաեւ մեր վերոնշյալ ամենամյա վիճակագրական տեղեկություններում:

52 Տե՛ս «Karen Jappes Arbeit», „Der Orient“, 1926, էջ 3:

53 Անդ, էջ 3-4:

54 Դա բնականաբար պայմանավորված էր նրանց անձը չվարանգելու մտահոգությամբ:

55 Անդ, էջ 5: Չնայած դրան, Յեպեն Ջարաբլուսի մոտակա՝ Բուրուս բնակավայրում շարունակում էր մի գործակալ պահել, որի խնդիրն էր հետազոտել Եփրատի այդ հատվածում, Նալեկից դեպի հյուսիս եւ արևելք ընկած շրջանները եւ հայերի հայրնաբերելու դեպքում օգնել նրանց դիմելու փախուստի: Տե՛ս **K. Jeppe**, Ein Jahr Rettungsarbeit, էջ 67:

56 Անդ:

ծացնել մյուս մասնաճյուղերին կապարվող նյութական հարկացումները՝ ըստ հնարավորին ընդլայնելով նրանց գործունեությունը:

Մ. Մելքոնյանից բացի փրկարար աշխատանքներում Յեպենին մեծ աջակցություն էր ցուցաբերում նաև Լեոպոլդ Գազզուկը, որը, 1923 թ. մարտից դառնալով նրա անձնական թարգմանարար, ղեկավարում էր նաև թաղաքի աղքատներին և հիվանդներին ցուցաբերվող օգնության աշխատանքները⁵⁷: Բացի այդ, 1925 թ. դանիացի բարեկամների կողմից Նալեա ուղարկվեց մի նոր օգնական ևս՝ օր. Յենի Յենսենը, որն այնպիսի սրանձնեց դպրոցի, ձեռնարկությունների և հիվանդանոցի վերահսկողությունը՝ Յեպենին հնարավորություն ընձեռնելով ամբողջովին նվիրվել փրկարար աշխատանքներին⁵⁸:

Ազգաբազմից երեխաների մեծ մասը, բնականաբար, աքսորի ժամանակ եղել էին փոքրիկ՝ մոտավորապես 5-6 տարեկան երեխաներ, որոնք փախուստի որոշում էին ընդունում ավելի բնագոյի, քան հիշողության դրդումով: «Նրանց նախկին կյանքի հիշողությունը նրանց մեջ պահպանվում էր ինչպես մութ նախագագացում կամ կիսամոռացված երազ,- նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն:- Նրանք հագլիվ թե ի վիճակի էին հասկանալ այն մղումը, որը նրանց դրսում հանգիստ չէր տալիս և, ի վերջո, մեծ մասամբ մեր գործակալների օգնությամբ դարձյալ տուն էր բերում»⁵⁹:

Չնայած այդպիսիները հայտնաբերվելուց հետո որոշ ժամանակ փորձում էին համառոտորեն իրենց համարել մահմեդականներ, սակայն նրանցից շատերի դեպքում դա թյուրըմբռնման արդյունք չէր, և, ինչպես Յեպեն էր նշում, նրանց ծագման ուրացումը մեծ մասամբ պայմանավորված էր երկյուղով, քանի որ «նրանց ներշնչել էին, որ նրանք կապանվեն, եթե իրենց ազգությունը խոստովանեն, քանի որ նրանցից շատերը տեսել էին, թե իրենց հարազատներն ինչպես են սպանվել, այնպես որ պետք է հավատարման, որ նույն ճակատագիրը սպասում էր նաև իրենց»⁶⁰:

Այդ երեխաների հոգում երկյուղը փարատվելու ու փախուստի վճռականություն ներշնչելը դժվար չէր, և, ինչպես 1924 թ. տեղեկացնում էր Կ. Յեպեն, փախստական հայերի մոտ կեսը պարկանում էր այդ խմբին: Իհարկե, կային և այնպիսիները, որոնք արդեն համոզմունքով դարձել էին մահմեդական և վայրի ֆանատիզմով էին վերաբերվում այդ հարցին: Սակայն այդ դեպքերից նույնպես քչերն էին անհույս, և այն տղաներն ու աղջիկները, որոնք 12 կամ 13 տարեկանում «համոզված» մահմեդականներ էին, հաշվված ամիսների կամ առավելագույնը 1-2 տարվա ընթացքում գալիս էին ճշմարիտ ըմբռնման՝ գիտակցելով իրենց ազգային ու կրոնական պարկանելությունը⁶¹: Դա բնականաբար ինքնին տեսնելով չէր կարող և հնարավոր էր դառնում միայն Յեպենի կողմից կացարանում կազմակերպված հետադարձական «հոգևոր կրթության» միջոցով⁶²: «Տուն գալը նրանց համար համանշանակ չէ: «Իրենց տանը

57 Տե՛ս Der Geburtstag, „Orient im Bild“, 1929, էջ 46: Ավարիացի, ազգությամբ լեհ Լ. Գազզուկը 1921-1922 թթ. եղել է քրասպորտային գործի ղեկավարը Խարպություն, իսկ 1923-ից աշխատանքի անցավ Նալեայում օր. Կ. Յեպենի մոտ՝ որպես թարգմանար և օգնական: Անդ:

58 Տե՛ս Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 5-6:

59 Տե՛ս Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild“, 1927, էջ 65:

60 K. Jeppes, Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 61:

61 Անդ, էջ 61-62:

62 «Ներքել չենք կարող, որ մեզ համար մի փոքր դժվար է ազգաբազմի մեջ երկար մեզ մոտ պահել,- տեղեկացնում էր Կ. Յեպեն,- սակայն մյուս կողմից ուրախ ենք, որ նրանք շատ շուտ չեն հեռանում: Մենք դրանով

զգալուն»,- գրում էր այդ մասին Յեպեն: - Ոչ միայն նրանց մայրենի լեզուն է գրեթե ամբողջովին մոռացվել ևս պետք է նորից ուսուցանվի, այլև պետք է սկսեն միանգամայն այլ կերպ ապրել: Նրանք գալիս են մի միջավայրից, որտեղ, օրինակ, արյուն թափելը դեռ համարվում է սուրբ պարտականություն, և որտեղ նրանց հիմնականում մահմեդական մրաժեղակերպն է դրոշմվել...»⁶³:

Այդ «հոգևոր կրթության» հենքն, անշուշտ, կազմում էր լեզվի ուսուցումը, բայց ուշագրավ է, որ ավելի ներգործուն, քան խոսքը, հայ ժողովրդական երգը և երաժշտությունն էին, որոնց ունկնդրումը, ինչպես վկայում էր Յեպեն, մեծագույն ազդեցությունն էր գործում ազգային արմատներից խլված հայորդիների վրա: «Չնայած բառերը մոռացվել են ևս հաճախ դանդաղ են գիտակցության մեջ վերականգնվում,- ընդգծում էր նա,- սակայն հին մեղեդիները և ծանոթ հնչյունները, որ նրանց հանդիպում են կացարանում ևս եկեղեցում, ողջունում են նրանց որպես հին ծանոթներ և ամենաազդու ներգործությունն ունենում նրանց մեջ նախնական բնագույներն արթնացնելու համար: «Նայը արթնանում է», ինչպես մենք ենք դա անվանում: Դա նկատվում է նույնիսկ նրանց դեմքի արտահայտությունից...»⁶⁴:

Երեխաները սրանում էին նաև ընդգծված քրիստոնեական դաստիարակություն՝ ծանոթանալով Տիսուսի անձին, գործունեությանն ու պատվիրաններին: Վերջինիս հետ նրանց «մերձեցումն» ավելի առարկայական և անմիջական դարձնելու համար կացարանի ընդհանուր հավաքույթների սրահը զարդարված էր Տիսուսի անձը պատկերող և աստվածաշնչյան մոտիվներով պարզաստված այլ նկարներով, որոնք, ինչպես վկայում էր Յեպեն, մեծ ազդեցություն էին գործում մահմեդական մարդկայություններից նրանց ձեռքագրելու համար: «Երբեմն նրանք փորձում են համբուրել նկարները,- նշում էր Յեպեն:- Դրանք շատ բարձր են կախված, այլապես այժմ ոչինչ մնացած չէր լինի: Երբ, սակայն, մեկն այդ նպաստակով վեր է մագլցում, մենք նրան թույլ ենք տալիս դա անել: Այդ գործողությունը նրա հոգու երախտագիտության ճշմարիտ արտահայտություն է: Նա սկզբում պետք է միայն Տիսուսին պաշտի, իսկ ավելի ուշ նաև կիմանա, որ ճշմարիտ ազատությունը ներքին ազատությունն է: Անշուշտ, մինչև այս 12 տարվա ընթացքում վայրենացած քղաներից ու աղջիկներից դարձյալ լիարժեք մարդիկ դուրս կգան, կպահանջվի երկար ժամանակ, համբերություն և մեծ սեր: Սակայն դա օրինյալ աշխատանք է»⁶⁵:

Եթե նկատի առնենք, որ հայերեն ասված յուրաքանչյուր խոսք բոլորին հասկանալի դառնալու համար պետք է թարգմանվեր արաբերեն, քրդերեն կամ թուրքերեն, քանի որ երեխաները մեծ մասամբ հասկանում էին այդ լեզուներից միայն մեկը⁶⁶, ապա պարզ կլինի, թե նրանց կրթումն ու դաստիարակությունը հարկապես առաջին ամիսներին որքան դժվարություններ պետք է հաղթահարեր: Եւ այնուամենայնիվ դրանք հաղթահարվում էին, և կացարան մտնող յուրաքանչյուր հայորդի այնպեղից հեռանում էր միանգամայն պարզաստ

ավելի մեծ հնարավորություն ունենք հոգ տանելու նրանց հոգևոր կրթության մասին, քանի որ շատ բաներից զուրկ են եղել, ինչը նորից պետք է վերադարձվի, և մոլախոյր պետք է քաղհանվի: Sten Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild“, 1927, էջ 65:

63 Անդ:

64 Անդ:

65 Անդ:

66 Անդ:

նոր՝ ինքնություն կյանք մտնելու համար:

Ինչևէ, Յեպեն իր հայավերջից գործունեությունը միայն լիզայի կողմից հապկացված գումարներով էր կարող իրականացնել: Նրան օգնության ձեռք էին մեկնել նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ ու անհատներ, ինչպես, օրինակ, Լոնդոնի հայ կանանց միությունը, Լորդ մայորի ֆոնդը, Լոնդոնի Bible Lands Missions Aid Society ընկերությունը, Imperial Mar Relief Fund կազմակերպությունը, շվեյցարական օգնության միությունները և այլն⁶⁷: Այն ընկերությունը, սակայն, որը 1924-ից մեծագույն նյութական ներդրումն ունեցավ այդ աշխարհներում, Դ-ր. Լեփսիուսի արևելյան առաքելությունն էր: Նոր առաջադրանքների իրագործման համար միջոցներ ձեռք բերելու նպատակով այն գործի դրեց իր բոլոր հնարավորությունները: Կազմակերպության «Der Orient» և „Orient im Bild“ պարբերականները հեղեղված էին բարեկամներին ուղղված օգնության կոչերով: Այնպեղ կանոնավոր կերպով լույս էին տեսնում Յեպեի և Յակոբ Բյունցլերի տեղեկագրերը: Պարբերաբար և առաքվում էին մեծաքանակ թուղթիկներ, որոնցից շատերը հրատարակվում էին նաև «Der Orient»-ում: «Ո՞վ ամսական մեկ մարկ կտա մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա աղջկա կամ տղայի փրկության համար, - նշված էր, օրինակ, «Փրկագին» վերնագիրը կրող թիվ 30 թուղթիկում: - Նազարավոր մարդիկ սպասում են իրենց ազատագրմանը: Զնդանի դռները բաց են: Փրկարար աշխարհները կազմակերպված է: Պակասում է միայն փողը...»⁶⁸: Բարեկամների աջակցությունը դյուրացնելու նպատակով յուրաքանչյուր համարում տպագրվում էր նաև մի անդորրագիր հետևյալ բովանդակությամբ. «Փրկագին: Դ-ր. Լեփսիուսի արևելյան առաքելության գրասենյակին, Պոստդամ: Մենք՝ ներքոստորագրողներս, պարբերաբար կազմակերպում ենք հայտնում միասին/անհատաբար, 120 մարկ ուղարկել մահմեդական ստրկությունից մեկ քրիստոնյա երեխայի փրկության համար: Վճարումը կատարվում է՝ մաս-մաս (ամսական) քառորդ տարին մեկ անգամ»⁶⁹: Անդորրագրում այնուհետև տեղ էր հապկացված անունների և ստորագրությունների համար, իսկ վերջում նշված էր կազմակերպության հասցեն⁷⁰: Բարեկամներից, այսպիսով, պահանջվում էր միայն անդորրագիրն ամսագրից առանձնացնել և լրացնելով՝ ուղարկել ընկերությանը:

Դ-ր. Յոհաննես Լեփսիուսը բավականաչափ նյութական միջոցների հայթայթման համար գործի էր դրել իր՝ տաղանդավոր հրապարակախոսի ողջ ավյունն ու եռանդը՝ ձգտելով բորբոքել թե մարդասիրական և թե կրոնական նախանձախնդրությունները: «Աբդուլ Նամիդի ժամանակ մենք հազարավոր այրիների և որբերի ենք կենդանի պահել և օգնել ենք, որ մի նոր սերունդ մեծանա, - գրում էր նա 1925 թ. կազմակերպության բարեկամներին ուղղված իր ուղերձներից մեկում: - Այժմ թշվառությունը տասն անգամ ավելի մեծ է, քան այն ժամանակ: Պե՛րք է մենք այդ հարցում մի կողմ կանգնենք և մյուս ժողովուրդներին թողնենք մեծ բարեգործությունը կատարել: Ո՛չ, նաև մեր մասին պետք է ասվի, որ նրանք արել են, ինչ կարողացել են...»⁷¹:

Նակադրվելով մահմեդական շրջաններում քրիստոնեական բարոզության վերա-

67 Տե՛ս Karen Jeppes Arbeit, էջ 5:

68 K. Jeppes, Rettung aus muhammedanischer Sklaverei, p. 59:

69 Անդ, էջ 58:

70 Անդ:

71 J. Lepsius, „Der Orient“, 1925, էջ 2:

կանգնման՝ Գերմանական Ավերարանական Եկեղեցում ավանդաբար գոյարևոտ ձգարմունքին՝ Լևիստիսը դրանք համարում էր ժամանակավրեպ և անիմաստ, այն դեպքում, երբ հնարավորություն էր առարկայացել փրկելու տասնյակ հազարավոր քրիստոնյա կանանց, աղջիկների և երեխաների, որոնք դադարապարված էին մահմեդականացման: Այդ առաջադրանքը նա համարում էր մի յուրօրինակ բնություն, որի միջոցով գերմանացի քրիստոնյաները պարտավոր էին ապացուցել իրենց խոսքի և գործի համապատասխանությունը: «Այսպես ոչ միայն հնարավորություն է առարկայանում հայ ժողովրդի հազարավոր զավակների պահպանել, այլև իսլամի դաշտից հարուստ բերք հավաքել, որն այսպես ոչնչանում է, - գրում էր նա 1924 թ. հրատարակված իր «Փրկագին» վերնագիրը կրող կոչում: - Այսպես կարող է պարզվել, թե արդյոք մեր միսիոներական սերը կարո՞ղ է ավելին անել, քան բարեպաշտ խոսքերն են, արդյոք այն իսլամի դեմ պայքարում կարո՞ղ է քրիստոնեական հավատի գործեր ի հայտ բերել: Յուրաքանչյուր ավերարանական համայնք պետք է հավաքի նվազագույնը 6-7 ֆունտ կամ 120-140 մարկ մի քրիստոնյա տղայի կամ աղջկա թուրքական և քրդական հարեմներից ու վրաններից ազատագրելու և իսլամի լծից փրկելու համար: Ես խնդրում եմ բոլորին, ովքեր ինձ հետ միասին ամոթի և խայրառակության զգացումով կհամակվեն, նվիրվել այդ առաջադրանքի կատարմանը և մեզ ըստ հնարավորին շուրջ առողջ անողորմագրերի միջոցով գումար տրամադրել մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա երեխայի փրկության համար: ... Թե՛ղ Աստուծո օգնությունն ուղեկցի մեր կոչին»⁷²:

Իր փրկարար և որբախնամ հանձնառությունների իրագործման համար միջոցներ հայթայթելու նպատակով Լևիստիսն օգտագործում էր քարոզչության բոլոր հնարավոր եղանակները: Նա ով հանձն էր առնում վճարել մեկ փրկագնի կամ Ղազիրի (Լիբանան) որբանոցի մեկ որբ երեխայի տարեկան խնամքի համար պահանջվող ծախսերը, վճարման տարվա ընթացքում դառնում էր ընկերության անդամ՝ ստանալով համապատասխան վկայական և կանոնադրության մեկ օրինակ⁷³:

Լայն ծավալում ստացան նաև շրջիկ գեկուցումները: 1924 թ. կազմակերպությունում ներգրավվեցին երկու նոր անձինք՝ Լիզա Ռեյերը և Վալտեր Յիմերմանը, որոնք ունեին մեծ հոկտրական ձիրք և, զբաղվելով բացառապես այդ գործով, այդ և հաջորդ տարիներին կարևոր ներդրում ունեցան նոր բարեկամների հավաքագրելու հարցում⁷⁴: Բացի այդ, այն հոգևորականներին, ովքեր ցանկություն էին հայտնում իրենց համայնքներում փրկարար աշխատանքների վերաբերյալ գեկուցումներ կարդալ, տրամադրվում էին լուսանկարներ, տեսաժապավեններ և այլ ցուցադրական ու տեղեկատվական նյութեր⁷⁵: 1925 թ. սկզբին այդ նպատակով արդեն բազմացվել և շրջանառության մեջ էր դրվել լուսանկարների մի սովոր շարք, որը կրում էր «Մի քրիստոնյա ժողովրդի կործանումը» անվանումը և ներ-

72 J. Lepsius, „Lösegeld“, 1924, էջ 64:

73 R. Schäfer, Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 46: Ղազիրում յուրաքանչյուր որբի մեկ տարվա խնամքի համար պահանջվող ծախսը կազմում էր շուրջ 240 մարկ: Ինչ վերաբերում էր «փրկագնման» աշխատանքներին, ապա մեկ հայի ազատագրման ծախսը, կամ այլ կերպ ասած՝ մեկ փրկագինը 1924-25 թթ. կազմում էր 120-140 մարկ, իսկ 1926-ից՝ միջին հաշվով 180 մարկ: Անդ: Նմմա. K. Jepppe, Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 67:

74 Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1924, էջ 56: Նմմա. Mitteilungen, անդ, էջ 89:

75 Տե՛ս Waisenkind, „Der Orient“, 1925, էջ 13: Նմմա. R. Schäfer, Mitteilungen, էջ 46:

կայացնում էր արեւմտահայության արքայի վերջին շրջանի ողբերգությունները⁷⁶: «Der Orient»-ում հրապարակվելուց հետո պարբերաբար մեծ թվաքանակով բազմացվում էր հասարակական շրջաններին էին առաքվում նաև Յեպեի և Բյունցլերի տեղեկագրերը: Միաժամանակ Պոլսոյում Տեմպել հրապարակչությունում կազմակերպության միջոցներով հրապարակվում էին գանազան մեկնագրություններ և այլ աշխատություններ, որոնք հայտերի ներկայացման դեպքում առաքվում էին բոլոր ցանկացողներին⁷⁷:

1924-ից Լեփսիոսը ջանում էր նաև գերմանացի քրիստոնյաներին դրդել մասնակցելու «Ոսկե օրեր» կարգախոսի ներքո Արևելքի, այդ թվում նաև հայ որբերի համար կապարվող՝ ամենամյա միջազգային հանգանակությանը, որը տեղի էր ունենում դեկտեմբերի 7-ին⁷⁸: Գործը դյուրացնելու նպատակով նա 1924 թվականի «Ոսկե օրեր» նախօրեին բարեկամներին անվճար առաքեց թռուցիկներ և հանգանակության թերթիկներ, որոնք, ըստ ցանկության, լրացվում էր երբ էին ուղարկվում⁷⁹: Նույնը տեղի էր ունենում նաև հաջորդ տարիներին, և հստակորեն պետք է ասել, որ Լեփսիոսը կարողացավ ավանդույթն արմատավորել Գերմանիայում, որն, ինչպես շուրջ կրեաններ, տարիների ընթացքում ընկերությանը բավական մեծ եկամուտներ բերեց⁸⁰:

Իր հայանպասք պրոպագանդան միաժամանակ դպրոցներում և կիրակնօրյա կրթաբաններում տարածելու նպատակով Լեփսիոսը 1925 թ. հիմնեց նաև մի ամենամյա մանկական պարկերազարդ պարբերական, որը կոչվում էր «Für unsere kleinen Armenierfreunde» («Վայերի՝ մեր փոքրիկ բարեկամների համար») և պարունակում էր հետաքրքիր պատմություններ փախստական երեխաների և որբերի վերաբերյալ⁸¹: Կազմակերպությունը գուցա հեռաբար զբաղվում էր նաև Նալեպի և Ղազիբի հայ կանանց ու աղջիկների պատրաստած բարձրարվեստ ձեռագործների վաճառքով, որոնք պարբերաբար Պոլսոյում էին առաքում Յեպեի և Բյունցլերի⁸²: Այդ ասեղնագործությունները, որոնց տեսականին խիստ բազմազան էր (սփռուցներ, թաշկինակներ, ժանյակներ, օձիքներ, շրջակարեր և այլն), Լեփսիոսի և իր աշխատակիցների հետևողական բարոզության և գովազդների շնորհիվ Գերմանիայում արագորեն սպառվում էին՝ լրացուցիչ նյութական ներդրում բերելով օգնության աշխատանքներին:

Այդ բոլոր ջանքերն ինչպես հարկն է՝ արդյունավորվեցին, և Դ. Լեփսիոսի արևելյան առաքելությունը դեռ 1924 թ. ձեռնամուխ եղավ իր հանձնառությունների կատարմանը: Միայն 1924 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ընկերությունը Նալեպի՝ փրկագնման աշխատանքներին կարողացավ տրամադրել 4200⁸³, իսկ 1925 թ. ընթացքում՝ 24300 մարկ⁸⁴:

76 Անդ:

77 Որպես կանոն՝ ընկերության պարբերականներում մանրամասն գրախոսություններ էին ներկայացվում բոլոր նորանուն աշխատությունների վերաբերյալ: Տե՛ս Besprechungen, „Der Orient“, 1928, էջ 127-128: Նման., Besprechungen, „Der Orient“, 1929, էջ 31 և այլն:

78 Տե՛ս J. Lepsius, Weltkollekte für 60000 armenische Waisenkinden, „Der Orient“, 1924, էջ 92:

79 Տե՛ս J. Lepsius, Weltkollekte für 60000 armenische Waisenkinden, „Der Orient“, 1924, էջ 93:

80 Տե՛ս Aufruf, „Der Orient“, 1926, էջ 144: Նման. Mitteilungen, „Orient im Bild“, 1930, էջ 80

81 Տե՛ս Kinderblatt, „Der Orient“, 1925, էջ 64:

82 Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1924, էջ 89: Նման. Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 47: Նման. „Mitteilungen“, էջ 108 և այլն:

83 Տե՛ս K. Jepppe, Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 17:

84 Տե՛ս Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 5:

Ուղարկված գումարները Յեպեի կողմից անմիջապես ծառայեցվում էին իրենց նպատակին: Դրանցով 1924 թ. վերջին ազապագրվեցին և Նալեպի «Փրկարար կացարանը» տեղափոխվեցին 31, իսկ 1925 թ. ընթացքում՝ 223 հայ պարանիներ, կանայք և աղջիկներ⁸⁵:

1926 թ. Կ. Յեպեի և նրա գործակալությունների ուժերով մահմեդական ստրկությունից ազապագրվեցին 325, իսկ 1927-ին ևս 275, այսինքն՝ երկու տարիների հանրագումարային թվով՝ շուրջ 600 հայեր, որոնցից 297-ը բացառապես Դր. Լեփսիուսի ԱԱ-ի նյութական միջոցներով⁸⁶: Այդպիսով, մինչև 1927 թ. դեկտեմբերի 31-ը Յեպեի և նրա գործակալների կողմից ազապագրված հայերի ընդհանուր թվաքանակը հասավ 1700-ի, որոնցից 551-ի «փրկագինը» հատկացրել էր Լեփսիուսի կազմակերպությունը⁸⁷: Նրանց ազապագրման ընդհանուր ծախսերը համապատասխանաբար կազմեցին 27201,45 թուրքական ֆունտ, որից 9926,25 ֆունտը հատկացրել էր Ազգերի լիգան, իսկ մնացյալը՝ Դր. Լեփսիուսի ԱԱ-ն և հայ ժողովրդի մյուս բարեկամները⁸⁸, և բացի այդ ևս 24270 թուրքական ֆունտ կամ շուրջ 440000 մարկ փրամադրվեց փրկագնվածների սկզբնական խնամքի, կրթության և դաստիարակության նպատակներին⁸⁹: Ինչ վերաբերում էր նրանց հետագա ճակատագրին, ապա 1927 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նրանցից 110-ը դեռ գտնվում էին Յեպեի հովանավորության և խնամքի ներքո⁹⁰, 1134-ը գտնվում էին իրենց հարազատներին և տեղափոխվել նրանց մոտ, 342-ը դարձել էին միանգամայն ինքնուրույն և ապրում էին սեփական վաստակով, 66-ը փոխադրվել էին որբանոցներ կամ այլ բարեխնամ հաստատություններ, 10-ը մահացել էին, իսկ 38-ը՝ անհետացել⁹¹: Վերջիններիս մեծ մասը պարկանում էր այն երիտասարդների թվին, ովքեր իրենց՝ դեռ գերության մեջ գտնվող արյունակիցներին նույնպես Նալեպ փոխադրելու նպատակով էր էին վերադառնում, և եթե շարունակում էր այդ անել, ապա ոմանք, ովքեր չէին վերադարձել, ամենայն հավանականությամբ, բացահայտվել և սպանվել էին մահմեդականների կողմից⁹²: Իսկ ինչ վերաբերում էր մահացության դեպքերին, ապա անկասկած «Փրկարար կացարանում» կազմակերպված խնամքը և որակյալ բժշկական սպասարկումն էին պարճառ, որ այդ թիվն ավելի մեծ չէր: «Ուերք Է իսկապես հրաշք անվանել, որ միայն 10-ն են մահացել,- գրում էր Յեպեն հետադարձ հայացքով,- եթե

85 Stn Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, էջ 31: Նմմ. R. Schäfer, Zur Jahresrechnung, „Der Orient“, 1926, էջ 95:

86 K. Jeppe, Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, էջ 33: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի միջոցներով 1926 թ. փրկագնվել է 140, իսկ 1927-ին՝ 157 մարդ: Տն P. Schütz, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, էջ 19:

87 R. Schäfer, Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, էջ 31: Նմմ. P. Schütz, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, էջ 19: Այդ 1700 փրկագնվածներից «Փրկարար կացարանում» հանգրվանել և ըստ այդմ Յեպեի խնամքի և վերահսկողության հաշվեցուցակներում ընդգրկվել էին 1484-ը: Նրանցից 430-ը 15 տարեկանից փոքր երեխաներ էին, 463-ը՝ այդ տարիքից մեծ կանայք և աղջիկներ, իսկ 591-ը՝ այդ տարիքից մեծ տղաներ: Տն K. Jeppe, Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, էջ 33:

88 K. Jeppe, Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, անդ, էջ 33: 27201,45 թուրքական ֆունտը կազմում էր մոտավորապես 497786,535 գերմանական մարկ կամ 30003,199 անգլիական ֆունտ ստեռլինգ: Տն այդ տարադրամների արժեքային հարաբերակցությունը: Անդ:

89 Անդ:

90 Նրանցից 97-ը գտնվում էին Նալեպի «Փրկարար կացարանում», իսկ 13-ը՝ նորահիմն հայկական գյուղում: Անդ, էջ 34:

91 Անդ:

92 Անդ, էջ 34-35: 1922 թ. Նալեպ փոխադրված 18 տղաներ սեփական կամքով էին եր վերադարձել մահմեդականների մոտ:

նկարի առնվի, որ նրանց մեծ մասը կամ մահվան ճիշտներում էր, երբ մեզ մոտ եկավ, կամ հիվանդության սաղմն այնքան զարգացած էր, որ մենք դրա դեմ ոչինչ չկարողացանք անել»⁹³:

Ազգաբազման՝ այդ վրանգավոր և սխալից գործն իրականացվեց ոչ միայն նյութական, այլև մարդկային մեծագույն զոհաբերությունների գնով: Յեպեի երկու հավաքարիմ գործակալներին՝ Գրիգոր աղայի և Վասիլի ողբերգական ճակատագրի մասին արդեն փեղեկացվել է: Տեաևական գրկանքների ընթացքում թոքախտով հիվանդանալով 1927 թ. մահացան ևս երկուսը՝ Մուրադը և Եղիան⁹⁴:

Ինչևէ, 1927 թվականը Ազգերի լիգայի հովանավորությամբ իրականացվող՝ ազգաբազմական աշխատանքների վերջին փուլն էր, որի եզրափակմամբ փակվեցին նաև մասնաճյուղերը: Եւ Յեպեն, չնայած բազում դժբախտների հասանելի դարձած չլինելու կսկիծով, սակայն նաև իր հնարավորությունների առավելագույն օգտագործման գիտակցությամբ էր արժեւորում կարարված աշխատանքը: «Մենք կարողացանք մեր մասնաճյուղերը հանգիստ խղճով փակել,- գրում էր նա իր փեղեկագրերից մեկում:- Մենք չենք երկյուղել ջանքեր թափելուց և ծախսեր կատարելուց: Եթե նույնիսկ ամենքին չենք հասել, ապա արել ենք այն ամենն, ինչ մեզ, որպես մարդկանց, հնարավոր էր թվում»⁹⁵:

Յեպեն, այնուամենայնիվ, մրադիր չէր իր գործունեությունը դադարեցնել, քանի դեռ կարող էին նոր փախստականներ ի հայտ գալ: Դա փաստվեց դեռ 1928 թ. հունվարին, երբ Թուրքիայից անօրինակ գրկանքների հաղթահարման գնով կարողացան Նալեպ հասնել 8 կանայք և աղջիկներ, որոնց այդ համարձակ ձեռնարկին մղել էր «Փրկարար կացարանում» օթևան և աջակցություն գրնելու հույսը⁹⁶: Ուստի Յեպեն շարունակում էր մնալ իր դիրքերում՝ բարեկամներին հեղեղելով օգնության կոչերով և աղերսագրերով: «Մենք այժմ այլևս երկրով մեկ ճամփորդություններ չենք կատարում կորած երեխաներին գրնելու համար,- նշում էր նա իր 1928 թ. նամակներից մեկում,- սակայն խնդրում ենք. «Օգնեցե՛ք մեզ մեր դուռը բաց և մեր լույսը վառ թողնելու համար, որպեսզի նրանք կարողանան փան ճանապարհը գրնել»⁹⁷:

Օգնությունը չուշացավ. չնայած մասնաճյուղերը փակված էին, և «Ազգաբազման գործը» պաշտոնապես համարվում էր ավարտված, բայց այն չդադարեց: Գործակալները շարունակում էին իրենց փեղեկագրի որոնումները⁹⁸, և այն կազմակերպությունը, որը միայնակ ստանձնեց բոլոր՝ հետագա «փրկագինների» վճարումը, Դր. Լեփսիուսի ԱԱ-ն էր: Վերջինիս նյութական միջոցներով 1928 թ. ընթացքում ազգաբազմակցին և «Փրկարար կացարան» փեղեկագրի մեջ 67⁹⁹, 1929-ին 29¹⁰⁰, իսկ 1930-ին 58 հայորդիներ¹⁰¹: Ընդ որում, 1930 թ. գարնա-

93 Անդ, էջ 34:

94 Անդ, էջ 33: Յավոք, գործակալների փերաբերյալ կենսագրական փեղեկություններ չեն հաղորդվում: Նայրնի է միայն, որ Յեպեն այնուհետև կանոնավոր օգնություն էր ցուցաբերում նրանց ընտանիքներին:

95 Անդ, էջ 33:

96 Անդ, էջ 35:

97 Անդ:

98 Տե՛ս G. Hetzel, Flucht vor dem Islam, „Orient im Bild“, 1929, էջ 54:

99 Տե՛ս Unsere Lösegeldarbeit liegt noch nicht still, „Orient im Bild“, 1928, էջ 65:

100 Տե՛ս R. Schäfer, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

101 Տե՛ս R. Schäfer, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

նը նրանց հոսքը կտրուկ նվազեց, իսկ հուլիսից հետո արձանագրվեց փրկագնման միայն մեկ դեպք¹⁰²։ Այդ նվազումն օրինաչափ էր, քանի որ եղերական աքսորից արդեն անցել էր 15 տարի, և Յեպեն ու իր գործակալներն այլևս ոչ թե երեխաների հետ գործ ունեին, այլ հասուն մարդկանց, որոնք ոչ միայն օտարվել էին ազգային նկարագրից, այլև ամուսնական և այլ կապերով մերվել մահմեդական միջավայրին։ Բացի այդ, նրանք արդեն ունեին կարծր համոզմունքներ կամ, ինչպես Յեպեն էր խորհրդանշաբար ընդգծում, «սեփական կամք», որի վրա ներազդելը շարունակ ավելի էր դժվարանում¹⁰³։

Ինչևէ, 1930 թ. վերջին, երբ նոր փախստականներ այլևս ի հայտ չէին գալիս, և փրկագնված վերջին հայ աղջիկը դարձավ ինքնուրույն, «Փրկարար կացարանն» իր դռները մեկընդմիջությամբ փակեց¹⁰⁴։ Չնայած Յեպեն հետագայում իր հասարակություններից մեկում շարունակում էր մի սենյակ պահել հիվանդության կամ այլ պարճառներով վերստին իրեն ապավինող՝ նախկին սաների կամ նոր փախստականների ընդունման համար¹⁰⁵, սակայն այդպիսիք այլևս ի հայտ չեկան, և 1931-ից այդ աշխատանքը փաստորեն դադարեց։

Այսպիսով, Կ. Յեպեն՝ մոտ քսանամյա հայափրկիչ գործունեության ընթացքում մահմեդականների բնակավայրերից ազատագրվեցին և համակողմանի տեսական խնամքից և ուսումնառությունից հետո հայ ազգային-հավաքական կյանքում իրենց տեղը գրավեցին ընդհանուր թվով՝ 1900 կանայք, պարսիկներ և աղջիկներ, որոնցից 705-ը՝ դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի նյութական միջոցներով¹⁰⁶։

102 Տե՛ս **K. Jeppe**, *Schlußbericht über die Lösegeld-Befreiungs-Arbeit in Aleppo*, էջ 41։

103 Անդ էջ 42։

104 Անդ, էջ 41։

105 Անդ։

106 Տե՛ս **R. Schäfer**, *Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930*, էջ 21։ Կ. Յեպեն հայ ժողովրդին մատուցած իր ծառայությունների համար մեծ գնահատանքի արժանացավ նաև իր հայրենիքում՝ 1927-ին Դանիայի թագավորի կողմից պարգևատրվելով ոսկե շքանշանով։ Տե՛ս Karen Jeppe erhielt die goldene Medaille, „Orient im Bild“, 1927, էջ 43։